

ՀԵՏԵԻԵ՛ՆՔ ՆԱԽՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻՆ

Մարտիրոս Մինասեանը «Սիոն»-ի 1987 թ. Մայիս-Յունիս-Յուլիս ամիսներին միացեալ համարում (էջ 137-144) հրապարակել է մի գրախօսական, նուիրուած շարական թերթ»-ի 1986 թ. էջ 50-ում տպագրուած «Մի յողուածի առիթով» և «Պատասխան ընդդիմախօսիս» բանավիճային յողուածներին, որոնցից առաջինի հեղինակը տողերիս հեղինակն է, երկրորդինը՝ Բագրատ Ուլուբարեանը: Իմ յողուածում յայտնուում է, որ Բ. Ուլուբարեանը ճիշտ չի թարգմանել Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» երկրորդ գրքի ԿԳ Գլխի վերնագիրը և սխալ է հասկացել այդ գլխում հանդիպող շերտերը ձեռամբ» բառակապակցութեան իմաստը: Բ. Ուլուբարեանը չի ընդունել իմ դիտողութիւններէն ո՛չ մէկը: Մարտիրոս Մինասեանը խոստանում է յայտնել իր անկողմնակալ կարծիքը բանավէճի մասին: «Ատորև արտայայտելու եմ անհողմնակալ կարծիքս» (137): Այդ կարծիքն այն է, որ Ուլուբարեանն իսկապէ՛ս սխալուել է և՛ որ Խորենացու երկու հատուածի վերծանութեան դէպքում էլ ինքը (Մինասեանը) համամիտ է Արգարեանին: «Համամիտ եմ (ընդգծել է Մինասեանը - Գ. Ա.) Ստ. Մալխասեանցին և Գ. Արգարեանին» (139), «Գ. Արգարեանին համակարծիք եմ (դարձեալ Մինասեանն է ընդգծողը - Գ. Ա.)» (143):

Բնականոն պայմաններում սպասելի է, որ գրախօսը քննադատեր սխալուողին

և պաշտպաներ սխալն ուղղողին: Սակայն Մարտիրոս Մինասեանը նախընտրել է հակառակ ճանապարհը. քննադատել է ինձ և պաշտպանել Ուլուբարեանին: Փաստն աւելի ակնյայտ դարձնելու համար նախ ծանօթանանք այն սխալին, որը պաշտպանել է Մինասեանը: Պաշտպանութեան առարկան է շերտէր ձեռամբ» բառակապակցութեանը վերաբերող անիրազեկութիւնը: Ուլուբարեանը չիմանալով, որ բառակապակցութիւնը համաշխարհային գրականութեան մէջ (Աստուածաշնչի երբայական բնագրում) գործածուել է Մովսէս Խորենացուց աւելի քան հազար տարի առաջ և նշանակում է շնուագում էր ձեռքով», կարծել է, թէ բառակապակցութեան առաջին գործածողը Խորենացին է, որը նկատի է ունեցել ոչ թէ նուագելը, այլ պարելը: Սոյն սխալը ես ուղղել եմ, վկայակոչելով Աստուածաշնչի երբայական բնագիրը և յունարէն ու հայերէն թարգմանութիւնները, որոնցում գրուած է. «Դաւիթ երգեր ձեռամբ իւրով» (նոյն բովանդակութիւնն ունեն նաև երբայական և յունական Աստուածաշնչեբր): Ուլուբարեանն ինձ չհաւատալով, ստուգել է հայերէն Աստուածաշունչը և չի գտել իմ նշածը: Համոզուած լինելով, որ ինքը ճիշտ է ստուգել և՛ որ իմ նշած բառակապակցութիւնն Աստուածաշնչում չկայ, նա ինձ մեղադրել է Աստուածաշունչը կեղծելու և շարդար ու անխարդախ զէճ չմղելու մէջ: Այսպէսով գործ ունենք

տիրական խօսքերէդ, վազմուտն նկարագրութիւններէդ և ճարտար գրուագներէդ զգացած ախորժաւ: Չեղի համար ամենէն մեծ վարձք և ամենէն մեծ խրախոյս կը համարիմ այն ծափահարութիւնները զորոնք անշուշտ աննախանձարար Չեղի պիտի շնորհեն հանգիստականք, ցուցնելով թէ կը զգան, կը հասկնան Արշակայ և իր զօրավարին բերանը գրուած հայտարարիկ խօսքերուն զեղեցիկութիւնը և վսեմութիւնը:

Մողթելով Չեղ յաջողութիւն, մեամ աղնուութեանդ սիրոյ ողջունիւս:

Հ. Յ. Թերզոնց»

(Մնացեալը խզողիլ)

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժննի համալսարան

մարտնչող անիրազեկութեան բացայայտ դրսևորման հետ, եթէ բառակապակցութիւնն Աստուածաշնչում զործածուած լինէր բնգամէնը մէկ անգամ, կարելի էր ինչ-որ ձևով բացատրել անիրազեկութիւնը, բայց երբ զործածուած է երկու տարբեր գլուխներում (Թագաւորաց առաջին, գլուխ 18, տուն 10 և գլուխ 19, տուն 9), այս դէպքում միակ բացատրութիւնը մնում է Աստուածաշնչից օգտուել չիմանալը, այսինքն մասնագէտ չլինելը:

Աստուածաշնչի մասնագէտ չլինելը հասկանալի է, բայց երբ մէկը յանդնում է Խորենացի թարգմանել, պէտք է զոնէ Խորենացիազէտ լինի: Խորենացիազէտը կ'իմանար, որ բառակապակցութիւնը զործածել է առաջին անգամ ոչ թէ Խորենացին, այլ Թագաւորութեանց գիրքը: Կ'իմանար նաև, որ Խորենացին բառակապակցութիւնը զործածել է ոչ թէ պարելու, այլ երգելու իմաստով: Թագաւորութեանց գրքի մասին նա կ'իմանար և ինչ ստուգելու կարիքը չէր զգայ, եթէ ծանօթ լինէր, օրինակ, Գր. Խալաթեանցի և Ռ. Թոմսոնի խորենացիազիտական աշխատանքներին: Խալաթեանցը 1896 թ. Մոսկուայում հրատարակուած «Հայկական Հպօսը Մոսկուայի Խորենացու Պատմութիւնում» ուսերէն մեծագրութեան 229-331րդ էջերում, իսկ Թոմսոնը «Հայոց պատմութեան» 1978 թ. Լոնդոնում հրատարակուած անգլերէն թարգմանութեան 207րդ էջում նշել են, որ բառակապակցութիւնը գտնուած է Թագաւորութեանց գրքի չորս հատորներից առաջինի 19րդ գլխի 9րդ տանը: Թոմսոնը բառակապակցութիւնը թարգմանել է նուազելու (և՛ ոչ պարելու) իմաստով, որովհետև ա՛յդ իմաստն ունի Աստուածաշնչում և ա՛յդ իմաստով են թարգմանել նաև Մոսկուայի Խորենացու նախորդ թարգմանիչները, նրանց թւում՝ նաև Մալխասեանցը: Ուրեմն նախքան Խորենացուն թարգմանելն անհրաժեշտ էր ծանօթանալ նախորդների վաստակին և իմանալ, թէ ինչ է նշանակում բառակապակցութիւնը: իմանալու դէպքում Խորենացին ճիշտ կը թարգմանուէր, Մալխասեանցն էլ անակղի չէր մեղադրուի սխալ թարգմանելու մէջ:

Սխալուելը մարդկային է և ամէն՝ օք կարող է սխալուել: Բայց երբ Ուլուբարեանն ինչ մեղադրում է Աստուածաշնչում կեղծելու, իսկ Մալխասեանցին՝ բառակապակցութիւնը սխալ թարգմանելու մէջ, նշանակում է նա հանգէս է գալիս որպէս կրկնակի անիրազեկ, որը չի իմացել Աստուածաշնչից օգտուել և ծանօթ չի եղել խորենացիազիտութեանը: կրկնակի անիրազեկին պաշտպանելը դատապարտելի է ոչ միայն գիտական, այլև բարոյական առումներով, որովհետև պաշտպանելը հրատարակային շրջանառութեան մէջ է դրել սխալ գիտելիքներ գիտական առարկայի վերաբերեալ և վարկաբեկող ազդեցութիւններ իր տարածած գիտելիքներն ուղղորդի բարոյականութեան մասին: «Անկողմնակալ» Մարտիրոս Մինասեանը, ինչպէս ասուեց, բռնել է մարտնչող անիրազեկին պաշտպանելու ճանապարհը: Նա իր պաշտպանեալի վարքադիժը համարում է բարդար ու անխարդախ և գտնում է, որ Արգարեանը ոչ միայն արդար ու անխարդախ չէ, այլև ծածկամիտ է և աղբիւրները թաքցնող. «Բ. Ուլուբարեանն իր պատասխանի վերջում մաղթում է, որ վէճը գիտութեան մէջ և կեանքում լինի բարդար ու անխարդախ»: Ես (Մինասեանը - Գ. Ա.) աւելացնում եմ՝ նաև առանց ծածկամտութեան կամ աղբիւրների գաղանապահութեան» (144):

Եթէ նոյնիոյ Արգարեանն իսկապէս թաքցրած լինէր բառակապակցութեան աղբիւրը և զա՛ լինէր պատճառը, որ Ուլուբարեանը սխալուել է, դարձեալ Մինասեանի վճիռը դատապարտելի է, որովհետև մեղաւոր է ճանաչուած ոչ թէ սխալուողը, այլ սխալն ուղղողը: Եթէ Ուլուբարեանն արդար ու անխարդախ բանավիճէր, կարիք չէր զգայ Արգարեանին ստուգելու և չէր սխալուէր: Նա կամովին է ստուգել ինչ, հետևաբար կամովին էլ պէտք է գտնէր բառակապակցութեան աղբիւրը: Այն բանից յետոյ, երբ ես յայտնել եմ, որ բառակապակցութիւնը գտնուած է «Թագաւորութեանց» գրքում, Ուլուբարեանին մնում էր Հայկազեան բառարանի միջոցով իմանալ, որ նկատի ունեմ «Թագաւորութեանց» առաջին գիր-

քը, որում և գտնուում է բառակապակց-
 ցութիւնը: Ի դէպ՝ Ուլուբարեանն այդ-
 պէս էլ վարուել է: Նա գիտակցել է, որ
 «Գրական թերթում» աղբիւրները միշտ
 չէ, որ նշուում են ամենայն մանրամաս-
 նութեամբ (այդպէս նշուում են գիտական
 հանդէսներում) և մտքով անգամ չի անց-
 կացրել, թէ ես թաքցնելու կարիք զգա-
 ցած կը լինէի (թաքցնելու վարկածը զուրկ
 է տրամաբանութիւնից, որովհետեւ իմ
 նպատակը եղել է, ընդհակառակը, Ուլու-
 բարեանին ցոյց տալ, որ բառակապակցու-
 թիւնը գործածուած է «Հայոց պատմու-
 թիւնից» բացի նաև Աստուածաշնչում):
 Հետևելով իմ մատնացոյց արած աղբիւ-
 րին՝ նա «Թագաւորութեանց» առաջին
 գրքի, 16րդ գլխի, 23րդ տանը չի գտել
 իր որոնածը:

Ինչպէս տեսնում ենք, Մինասեանն
 ընթերցողին թիւրիմացութեան մէջ է
 դրել, երբ յայտարարել է, թէ աղբիւրը
 թաքցուած է հղել: Ուլուբարեանն ինքն
 է հերքում թաքցնելու վարկածը, ամե-
 նայն որոշակիութեամբ նշելով «Թագաւո-
 րութեանց» գրքի առաջին հատորը, 16րդ
 գլուխը, վերջին տունը (23րդ): Հարց է
 ծագում. ամենհողմնակալ Մինասեանն ին-
 չ՞ու է բռնել Ուլուբարեանի կողմը. նոյն
 իսկ այն դէպքում, երբ Ուլուբարեանն
 ինքը հերքում է այդ կողմնապահութեան
 հիմքերը: Մինասեանին արդէն ճանաչե-
 լով՝ կարող ենք կռահել, որ նա պէտք է
 շարունակի պնդել թաքցնելու վարկածը,
 որովհետեւ Ուլուբարեանը յամենայնդէպս
 Աստուածաշնչում չի գտել իմ նշածը:
 Այս պնդումը կանխելու և Մինասեանին
 նորանոր անյարմար վիճակներում յայտ-
 նընելու հնարաւորութիւնից վաղորօք օ-
 զատելու համար, առաջարկում եմ կար-
 դալ «Պատմա-բանասիրական հանդէսի»
 1987 թ. No. 4-ում տպագրուած իմ յղ-
 ուածը («Մովսէս Խորենացու «Հայոց պատ-
 մութեան» մի քանի մեկնութիւնների
 շուրջ»), որում բացատրուած է բառակա-
 պակցութիւնը չգտնելու պատճառը: Իսկ
 այժմ բաւարարուեմ յիշեցնելով Գր. Խա-
 լաթեանցի և Ռ. Թոմասնի աշխատութիւն-
 ները, որոնցում կէտ առ կէտ նշուած են
 ինչպէս բառակապակցութեան տեղն Աս-

տուածաշնչում, այնպէս էլ Խորենացու
 և Աստուածաշնչի կապը: Սա մասնագի-
 տական աշխատում հանրայայտ գիտելիք
 է, այնքան հանրայայտ, որ այն կասկածի
 տակ վերցնելն ու իմ գրածն ստուգելու
 կարիքն զգալը բացայայտում է ոչ միայն
 ստուգողի, այլև նրան հովանաւորողի
 անյարմար վարքագիծը:

Ստուգելու կարիքն զգալուց աւելի
 անյարմար էր ստուգելն ու չգտնելը, այն
 դէպքում, երբ բառակապակցութեան տեղը
 նշուած է ոչ միայն Խալաթեանցի, Թոմ-
 սոնի և այլոց աշխատութիւններում, այլև
 Աստուածաշնչից օգտուողի համար նախա-
 տեսուած ամենաառաջին ձեռնարկում՝ Ե-
 բրուսաղէմի հայերէն Համարաբարանում,
 (աշխատատեղութեամբ Թ. Աստուածաբա-
 րանի, Եբրուսաղէմ, 1895), որի 924րդ է-
 ղում դրանցուած է. «Ա. Թագ. ԺԼ 10...
 Դուռք երգե ձեռամբ իւրով»: Ահա սո՛ւ է
 իմ նշած աղբիւրը, այսինքն «Թագաւո-
 րութեանց» առաջին գրքի, 18րդ գլխի,
 10րդ տունը: Հէնց այս տունն եմ ես
 նշել, երբ գրել է. «Խորենացին ժամանա-
 կակից էր Աստուածաշնչի հայերէն թարգ-
 մանութեանը, և հնարաւոր է, որ ինքն
 էլ թարգմանել է «Գիրք թագաւորու-
 թեանց» կոչուող մասը, որում Դուռք
 թագաւորի մասին կարգում ենք. «Դուռք
 երգե ձեռամբ իւրով»: Աստուածաշնչում
 ուրիշ ո՛չ մի տեղ չկայ իմ նշածը, և ես
 էլ սեռով սպիտակի վրայ գրել եմ, որ
 նշածս գտնուում է «Թագաւորութեանց»
 գրքում: Եթէ անգամ այդ գրքի տնունը
 տուած էլ չլինէի՝ պէտք է, որ Ուլու-
 բարեանը դիմէր Համարաբարանին (նոյն-
 իսկ հիմէ Գր. Խալաթեանցի և Ռ. Թոմ-
 սոնի մասին չգիտէր) և «երգել» կոմ
 «ձեռք» բառերի դիմաց գտներ նշածս:

Այսքան տարրական ու այսքան բա-
 ցայայտ մի փաստ Մինասեանը համարել է
 թաքցուած, որովհետեւ, ինչպէս պարզը-
 ւում է նրա գրախօսական ուսումնասի-
 րութիւնից, նա ինքը չի իմացել ո՛չ
 Խալաթեանցի ու Թոմասնի, ո՛չ էլ Համա-
 բարաբարանի մասին: Ահա թէ նա ինչ է
 գրում. «Նրան (Ուլուբարեանին - Գ. Ա.)
 պիտի օգնէին Եբրուսաղէմի հայերէն Հա-
 մարաբարանը, բայց սա չուներ այդ արտա-

յայտութիւնը երգել բառայօղուածում» (140): Որպէսզի Մինասեանին զրկենք արդարանալու հնարաւորութիւնից, ասենք, որ նա նշել է միայն «երգել» բառայօղուածը, բայց նկատի է ունեցել բառակապակցութեան բացակայութիւնն առհասարակ Համարաբառում: Եթէ նա իմանար, որ Համարաբառում բառակապակցութիւնը կայ, բնականաբար, կը գրէր այդ մասին: Այնինչ նա ոչ միայն չի գրել, այլև Ուլուարեանին արդարացրել է հէնց նրանով, որ Համարաբառում նա իբր չէր կարող գտնել իր որոնածը: Չենք կարծում, թէ նա Ուլուարեանին այնքան անիրազեկ համարէր, որ կարծէր, թէ նա բառակապակցութիւնը պէտք է որոնէր միայն «երգել» (և ոչ՝ նաև «ձեռք») բառայօղուածում: Երբ քննութեան աւարկան ոչ թէ միայն «երգել» բառն է, այլ բառակապակցութիւնը, կը նշանակի այդ առարկան բազկացած է հաւասարապէս երկու բառից՝ «երգէր ձեռածք»:

Միայն «երգել» բառայօղուածը մատնացոյց անելը և այդ հզանակով Ուլուարեանին արդարացնելը կը նշանակէր դիմել ընթերցողին խաբելու միջոցին: Որ Մինասեանն այդ միջոցին չի դիմել, այլ պարզապէս ինքն էլ չի իմացել, որ Համարաբառում իմ նշած բառակապակցութիւնը կայ, դա երևում է նաև նրանից, որ նա ենթադրել է, թէ ես բառակապակցութիւնն Ատուռածաշնչում գտել եմ «ինքնուրոյն կամ ՆԷԻից (Հայկազեան Բառարանից - Գ. Ա.) իմանալով» (141): Ինչպէս տեսնում ենք, նա չի գրել, թէ ես կարող էի օգտուել նաև երուսաղէմի

Համարաբառից, որում նոյնպէս բառակապակցութիւնը գրանցուած է, ըստ որում՝ գրանցուած է շատ աւել որոշակի, քան Մինասեանին յայտնի Հայկազեան բառարանում: Համարաբառից բացի, Մինասեանին յայտնի չեն եղել նաև վերոյիշեալ խորհնացիագիտական աշխատութիւնները, որոնք և հանդիսանում են իմ իրական աղբիւրները: Ես Հայկազեան բառարանին կամ Համարաբառին դիմելու կարիք չեմ ունեցել, որովհետև մասնագիտութեան բերումով վաղորօք զբաղուել եմ մեր մատենագիրների բառու բանով, ծանօթ եմ եղել Խորհնացու երկում դեռևս բացատրութեան կարօտ հատուածներին, փորձեր եմ դրանք բացատրել, իմացել եմ, որ Խալաթեանցն ու նրա հեռագրութեամբ՝ Թոմասնը բացայայտ նշել են բառակապակցութեան տեղը Ատուռածաշնչում: Այս ամէնը յայտնի չի եղել Մինասեանի պաշտպանելին, որը ոչ միայն չի իմացել, այլև չի՛ կառնեցել իմանալ տարրական մի գիտելիք և պատճառ է դարձել «Գրական թերթում» և «Սիոնում» վարելու մի բանավէճ, որն անյարմար վիճակ է ստեղծել ոչ միայն իրեն ու Մինասեանի, այլև խմբագրութիւնների համար: Այսպիսի մի բանավէճի ես չէի անդարդառնայ, մանաւանդ՝ «Պատմա-բանասիրական հանդէսում» հրատարակած օղուածից յետոյ, բայց ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ «Սիոն»ը պաշտպանելու է սխալուողին, իսկ ինձ ներկայացնելու է «արդար ու անխաղախ» վէճ չմղողի դերում:

(Շարունակելի՛ 1)

ԳԻՈՐԳ ԱՐԳԱՐԵԱՆ
Երևան, Մատենադարան

